ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 943 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 702-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և 34-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 21-րդ հոդվածով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 702-Լ որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված Պետական եկամուտների կոմիտեի կառուցվածքում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) ստեղծել հիմնական կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող Միջազգային հարկման վարչություն.

2) Հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչությունից առանձնացման եղանակով ստեղծել Խաղային գործունեության վերահսկողության վարչություն:

2. Որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 11-րդ կետի 15-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15) օրենքով նախատեսված ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության կազմակերպման ոլորտում վերահսկողության իրականացումը.».

2) 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15.1-ին ենթակետով.

«15.1) խաղային գործունեության ոլորտում օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրականացում.».

3) 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16.1-ին ենթակետով.

«16.1) միջազգային հարկման ստանդարտների ներդրում և կատարելագործում.».

4) 12-րդ կետի 33-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ .

«33) խաղային գործունեության և օպերատորի գործունեության նկատմամբ օրենքով սահմանված վերահսկողության իրականացումը.».

5) 12-րդ կետի 40-րդ ենթակետի և 28-րդ կետի 27-րդ ենթակետի վերջում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

6) 12-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 41-րդ ենթակետով.

«41) միջազգային պայմանագրերով և հարկային օրենսդրությամբ միջազգային հարկման ոլորտում իր իրավասությունների շրջանակներում միջազգային ստանդարտների ներդրումը, կատարելագործումը և նշված ոլորտում հսկողության իրականացումը:».

7) 28-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 28-րդ և 29-րդ ենթակետերով.

«28) Միջազգային հարկման վարչություն.».

«29) Խաղային գործունեության վերահսկողության վարչություն:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

22.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ